

5796

3knt/47.92/

P-55

252

Ջեօրջիաներ քոյոյ յեկրմնէի շիտցի՞

Լ. ԲԵՐԻՍ.

ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԿԵՆՍԱԳՈՐԾԵՆՔ
ՀԱՄ Կ (Բ) Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ
ՅԵՐԿՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի յերկրորդ պլենումում 1934 թ.
մայիսի 31-ին րնկ. Բերիայի ունեցած յելույթից)

ՀՈՒՆԻՍԻՆ
- 55

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1984

25 AUG 2005

Պրակտիկական քաղաքականության միջոցառում

ՀՊՈ (47-93)
F-55

Լ. ԲԵՐԻԱ

14 NOV 2000

**ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԿԵՆՍԱԳՈՐԾԵՆՔ
ՀԱՄ Կ (Բ) Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ
ՅԵՐԿՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՊՈ

(Համ Կ (Բ) Կ Անդրյեխով լեհական պլենումում 1934 թ. մայիսի 31-ին
ընկ. Բերիայի ունեցած խոսքից)

252

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1934




01 MAR 2003

5796



3288-91



Л. Р. Р. Р. Р.

Նախքան պլենումը փակելը յետ ինձ թույլ եմ տալիս մի քանի խոսք ասելու: Կուսակցության Յերկրային Կոմիտեյի պլենումում քննված ցանքսի արդյունքների, մշակման ու բերքահավաքի նախապատրաստման, ապրանքաշրջանառության և սնանանքուծության վերաբերյալ հարցերն անմիջականորեն բղխում են կուսակցության 17-րդ համագումարի վերջնական եզրակացությանը: Դրանք ընթացիկ շրջանի հրատապ հարցերն են Խորհրդային Միության բոլոր յերկրների համար, ներառյալ, իհարկե, նաև Անդրկովկասի համար: Ուստի հսկայական նշանակություն տալով տվյալ պլենումին, Յերկրային Կոմիտեյի բյուրոն վերջին պլենումը հրավիրել ընդլայնած կազմով, բոլոր քաղաքապետների պետերի և կուսակցության խոշոր շրջկոմների քարտուղարների մասնակցությամբ:

Այն վերջնականորեն պլենումն որակարգում դրված հարցերը գործնականորեն քննարկելու հետևանքով, պետք է անհապաղ գործնականորեն իրականացվեն ամբողջ Անդրկովկասում:

Յեթե մեր հողփողկոմատների աշխատողները կարողանային տալ ցանքսի հանրագումարները, ապա այսօր մենք կկարողանայինք խոսել պլանը 100 տոկոսով կատարված լինելու մասին: Չե՞ վոր առ 25-ը մայիսի արդեն կատարվել է պլանի 96 տոկոսը: Վերջին հինգ օրում, դատելով ընդունած տեմպից և հաշվի առնելով այն մշակութային, վերջնական ցանքսի ժամկետը վրա յի հասնում հունիսի 10—15-ին, մենք հավանաբար կարող ենք ասել, վոր արդեն հասել ենք 100 տոկոսին:

Ինչ հետևություններ կարող ենք անել մենք դրանից:

Այս տարի ցանքը մենք ավելի լավ և ավելի շուտ կատարեցինք, քան 1933 թվականին: Այժմ մենք կարող ենք մեր բոլոր ուժերը կենտրոնացնել մշակման վրա:

Մշակումն ավելի լավ կատարելու գործում հսկայական դեր պետք է խաղան մեր մեքենա-տրակտորային կայանները: Մեքենա-տրակտորային կայաններն ընթացիկ տարվա գարնանացանի կամպանիան ավելի կազմակերպված իրականացրին, քան անցյալ տարի: Այդ իսկ պատճառով ՄՏ Կայանների սպասարկած կոլտնտեսություններն իրենց բոլոր ցուցանիշներով այս գարնանն առաջին տեղը գրավեցին: Սակայն բավարարվում են մեզ արդյոք մի շարք մեքենա-տրակտորային կայանների ներկա վիճակը: Արդյոք հանդիսանում են նրանք կատարելապես տնտ-հաշվարկային կազմակերպություններ: Վրչ:

Շատ մեքենա-տրակտորային կայաններ լիովին չեն բեռնավորված: Նրանցից մի քանիսը բացահայտ վատ աշխատանքի հետևանքով, մյուսները այն բանի հետևանքով, վոր չեն կարողանում հաշվի առնել իրենց սպասարկած այս կամ այն տեխնիկական մշակութի յուրատեսակ առանձնահատկությունները, ինչպես, որինակ՝ Արամտյան Վրաստանում թեյը:

Վառելանյութի գերաժախսը չափազանց բարձր է մեր համարյա բոլոր մեքենա-տրակտորային կայաններում: Բայց չե՞ վոր Խորհրդային Միության մի շարք շրջաններում վառելանյութը նորմայից ավել մատչելու համար, Համ Կ (բ) Կ Կենտկոմի և Միության Ժողկոմխորհի՝ վառելանյութի տնտեսման վերաբերյալ դիրեկտիվները՝ խախտելու համար, մեղավորները պատասխանատվության են կանչվել: Յեվ վոր միայն մեքենա-տրակտորային կայանների շարքային աշխատողները, վոր միայն դիրեկտորները, այլև յերկրային և շրջանային հողային որգանների աշխատողները:

Մի քանի մեքենա-տրակտորային կայանների ֆինանսները խառնիճաղանձ վիճակում են գտնվում: Յերբեմե դիրեկտորները չգիտեն, թե ո՞վ է պարտ նրանց և ում են իրենք պարտք:

Մեքենա-տրակտորային կայանների արտաքին տեսքը նույնպես շատ բան ունի պակասալիք: Մեքենա-տրակտորային կայանի սահմանները մտնելիս այնպիսի տպավորություն է ըստեղծվում, վոր ՄՏ Կայանը կարծես ինչ վոր քոչող կազմակերպություն է՝ ճանապարհները բոլորովին անպետք են, կանաչազարդման մասին վոր վոր չի մտածում, տրակտորներն ու այլ մեքենաները ցիր ու ցան, անկարգ ու անկանոն թափված վիճակում են: Բայց չե՞ վոր այդ բոլորը կարգի բերելու համար

կարիք չկա շատ ուժ ու յեռանդ մոխելու, այլ պետք է միայն ցանկություն ունենալ և այդ ամենն արագ կարելի յե անել:

Շնորհիվ մեր մեքենա-տրակտորային կայանների մի մասի այդ վիճակին, մենք ունենք աշխատանքի բարձր ինքնարժեք, մեծ ֆնանսներ, աշխատանքի վատ վորակ:

Յեթե անք առմիջապես վճարկան միջոցներ ձեռք չառնենք այդ ամենախայտառակ փաստերը վերացնելու համար, յեթե ամուր ընդհուպ ձեռնամուխ չլինենք որինակելի կարգ ու կանոն հաստատելու մեր ՄՏ Կայաններում, ապա առանց տնտհաշվարկի կարգավորման մշտապես խափանումներ կլինեն մեքենատրակտորային կայանների աշխատանքում:

Ո՞վ պետք է զբաղվի այդ գործով:

Նախ և առաջ մեքենա-տրակտորային կայանի դիրեկտորը: Դիրեկտորը պետք է լիակատար տեր ու տիրական լինի իր ՄՏ Կայանում: Դիրեկտորը պետք է սովորի դժամ հաշվել, ամեն մի ուրբուր համար պատասխանատվություն կրել:

Ընկերներ, անհրաժեշտ է, վոր քաղբաժինները նույնպես ընդհուպ զբաղվեն այդ հարցով: Ի հարկե, նրանք շատ բան են արել: Սակայն մինչև այժմ արվածը բավական չէ: Քաղբաժինները յերբեմե թույլ են տալիս վճարկանյութը նորմայից ավելի ծախսելու, դեկավարվելով պլանն ինչ գնով ել լինի կատարելու ցանկություն: Յեթե այդպիսի թույլատվություն ու տրված, անհրաժեշտ է գոնե տեսնել, թե ինչու պլանը կատարելու համար անհրաժեշտ է վառելիքի գերաժախս անել, և միջոցներ մշակել այդ յերևույթները հետագայում վերացնելու համար: Մեքենատրակտորային կայաններով քիչ են զբաղվում նաև շրջկոմներն ու շրջգործկոմները: Նրանք շատ հաճախ այդ գործից հեռու յեն կանգնած: Ինչո՞ւ: Մի՞թե կուսակցության շրջկոմը կամ շրջգործկոմը պատասխանատու չեն ՄՏ Կայանի վիճակի համար: Յեթե նրանք տեսնում են, վոր ՄՏ Կայանը ճեղքվածք ունի, յեթե նրանք նկատում են վառելանյութի հսկայական գերաժախս, յեթե նրանց հայտնի յե, վոր ՄՏ Կայանի ֆինանսներն անկանոն են, ապա ինչո՞ւ չպետք է խառնվեն նրանք այդ գործին: Մի՞թե վորևե մեկն արգելել է նրանց այդ միջամտությունը: Մի՞թե նրանցից վերցված է պատասխանատվությունը ՄՏ Կայանի համար: Շրջկոմները և շրջգործկոմները պետք է հաստատապես հիշեն և գիտենան, վոր իրենք նույնպես պատասխանատվություն են կրում ՄՏ Կայանի վիճակի համար:

Մենք մեր հողօգտագործողներին աշխատանքի մասին պատելու չենք ՄՏ Կայանաների վիճակից: ՄՏ Կայանաները պետք է որինա-
կելի կազմակերպություններ լինեն գյուղում: Անհրաժեշտ է յետ
մնացող ՄՏ Կայանաները սովոր ձեռք տալ: Այն ժամանակ մենք
կկարողանանք ապահովել մեր դաշտերի ամօրի լավ մշակումը,
դաշտեր, վորոնք վատ չեն ցանվել արդեն:

Բամբակի մշակման առաջիկա աշխատանքների մասին:
Տվյալ պլանումն արդեն վորոշում ընդունեց, վորտեղ ամեն ինչ
նախատեսված է և կրկնելու կարիք չկա: Պետք է միայն պլանումի
վորոշումները հասցնել կուսակցության ամեն մի անդամին,
կոմիերիտականին, կոլտնտեսականին ու աշխատավորին, կազ-
մակերպել նրանց իրական պայքարն այդ վորոշումները կենսա-
դործելու համար: Իրագործելով բամբակի վերաբերյալ պլանումի
կայացրած վորոշումները, մենք պետք է յկենք այն բանից,
վոր կուսակցության ու կառավարության կողմից մեզ տրված
պլանը նախատեսում է 158.700 տոնն հում բամբակի հավաքում
և վոր այդ առաջադրանքը պետք է կատարվի:

Թեյի մասին: Վրաստանի Կոմկուսի Կենտկոմն իր վորոշման մեջ
արձանագրեց, վոր վորոշ չափով թուլացել է կուսակցական ու
խորհրդային կազմակերպությունների ուղղորդությունը մեր աշ-
խատանքի այդ կարևորագույն ճյուղի նկատմամբ: Թեյարուծա-
կան շրջանների կուսակազմակերպությունները, ինչպես և թեյի
հետ առնչություն ունեցող կենտրոնական կազմակերպություն-
ները յերևակայեցին թե մենք արդեն տիրապետել ենք թեյարու-
ծությունը և հետևաբար գործը լավ է ընթանում և կարիք չկա,
վոր մենք առանձնապես նեղություն տանք մեզ, մտահոգվենք,
թե ինչպես լավ պետք է կազմակերպել այդ գործը: Այդպիսի
տրամադրություններն անդրադարձան թեյի մշակման ու թեյատե-
րե հավաքելու գործի վրա, թեյատերեր ժամանակին գործարան
փոխադրելու և վերամշակելու գործի վրա: Ինչպես գիտեք, մեզ
մոտ քիչ չեն թեյի գործարանները՝ ունենք 21 գործարան և
գեո չորսն էլ կառուցվում են: Մեր թեյի արդյունաբերությունն
աճել է, և փոխանակ մեր ուժերն այդ գործի վրա կենտրոնաց-
նելու, ներքին ռեսուրսները մոբիլիզացիայի յենթարկելու, մենք
հաճախ լսում ենք, թե սարքավորում չկա, այս չկա, այն չկա և
այլն: Յեղել են նաև այնպիսի գեպքեր՝ մի քանի շրջկոմի քար-
տուղարներ զարմանում էյին, յերբ իրենց մոտ թիֆլիսից ընկեր-
ներ էյին գալիս ոգնելու և վերահսկելու համար: «Ինչո՞ւ յեք

յեկել մեզ մոտ», — ասում էյին նրանք, — «մեզ մոտ գործը լավ է
ընթանում»:

Իսկ ստուգումը հայտարարեց այլանդակ յերևույթներ, թե-
պետ շրջաններում վատ ընկերներ չեն նստած: Այդ տեղի ունե-
ցավ այն պատճառով, վոր մարդիկ գտնում էյին, թե թեյի գործը
վերջացած է: Այդ սխալ է, ընկերներ: Թեյարուծությունը մենք
պետք է զարգացնենք, առաջ մղենք, և վոր ամենագլխավորն է,
մենք պետք է տանք ամօրի լավորակ թեյ, քան մինչև այժմ տվել
ենք: Մենք չենք կարող ինքնահոսի մատնել այդ գործը: Այդ
գործն ինքնահոսով առաջ չի գնա: Այստեղ անհրաժեշտ է, վոր մի
քիչ մաքրենք այն ընկերների ուղեղները, վորոնք գտել են, թե
թեյի գործը մեզ մոտ արդեն բարեհաջող է: Ընկերները չպետք է
կարծեն, թե ամեն ինչ լուծում է «Չայ-Գրուզյա» տրեստը, վո-
րն ընդհանուր առմամբ վատ չի աշխատում, կամ թե ամեն ինչ
լուծում է Միություն հողօգտագործող կից գտնվող մերձ-արևա-
դարձային մշակությունների կոմիտեն: Թեյի գործը կարող է իր
ուսերի վրա վերցնել և պետք է վերցնի ամբողջ կուսակազմա-
կերպությունը: Թեյի համար հարկ կլինի պատասխան տալ կու-
սակցությանը, յերկրին: Վրաստանի Կոմկուսի Կենտկոմը թեյի
համար արդեն հարվածեց վոմանց, և վոմանք էլ այժմ պետք է
մեծ թափով վերակառուցվեն, գոյություն ունեցող թերություն-
ները վերացնելու համար:

Վրաստանի Կոմկուսի Կենտկոմը հարց դրեց նաև թեյի ար-
դյունաբերությունը վորպես առանձին տրեստ առանձնացնելու
մասին: Այդ անտարակույս կհեշտացնի թեյի արդյունաբերության
դեկավարությունը և կբարելավի թեյի մշակումը:

Յերկու խոսք ծխախոտի մասին: Ծխախոտի ցանքը մենք
ժամկետից առաջ ենք կատարում: Մինչև այսօր ծխախոտագոր-
ծական հիմնական շրջանում Արխագիայում, ցանքը կատարված
է 97 տոկոսով, իսկ մենք դեռ տաճն որ ժամանակ ունենք մինչև
ժամկետը: Անհրաժեշտ է, վոր մեր կազմակերպություններն ընդ-
հույ լծվեն ծխախոտի մշակմանը: Պետք է այժմ իսկ կարգի բե-
րել չորանոցների շինարարությունը և պատրաստել ֆերմիտա-
ցիոն գործարանները: Մենք պետք է ծխախոտը տանք ժամա-
նակին, տանք ամօրի լավորակ ծխախոտ, քան նույնիսկ անցյալ
տարի:

Մի քանի խոսք ցիսրուսների մասին: Շնորհիվ այն հանգա-
մանքի, վոր առաջ ցիսրուսներով շատ քիչ էյին զբաղվում, նույն-

նիսկ 20—30 տարվա կյանք ունեցող հին տուճկերը վատ վիճակի մեջ են: Վոչ վոք ամեն ուր չի խնամել դրանք, վոչ մի պարարտանյութ չի հասցրել, վոչ վոք պայքար չի մղել այդ տուճկերի ֆնասատուների դեմ: Այժմ պետք է վերջ տալ այդ անկարգություններին:

Վատ է աշխատում նաև Լիմոնտրեստը: Նրա խորհրտնետու թյունները մինչև այժմ ել վատ վիճակի մեջ են: Ի հարկե, Լիմոնտրեստը նոր կազմակերպություն է, նա հին տուճկեր չունի, ամեն ինչ ստեղծվել է վերջին տարիներս, խորհրդային իշխանության ժամանակ: Առավել ևս մեծ պատասխանատվություն է ընկնում կուսակցական կազմակերպությունների վրա, վորոնք պետք է մեծագույն ուղեւթյուն ցույց տան Լիմոնտրեստին: Մեզ մնալ շրջաններում, անտարակույս, մեծ խանդավառություն կա ցիտրուսային մշակությունների զարգացման գործում: Կոլտնտեսականները և աշխատավոր մենաթնտեսներն ակնբախ համոզվում են, վոր դա շատ շահավետ գործ է:

Մենք պետք է կազմակերպենք այդ խանդավառությունը: Զի կարելի է բավականանալ միայն տուճկեր տնկելով, պետք է ապահովել նաև նրանց խնամքը: Զի կարելի միայն տնկել և դրանով հանգստանալ: Այս տարի մենք տնկել ենք 50 հազար լիմոնի տուճկ, 170.000 մանդարինի տուճկ, մի քիչ նարինջ, մոտ 28 հազար տուճկ ներմուծեցինք Ամերիկայից և Իտալիայից: Ներմուծվել են վորոշ թերություններ ունեցող տուճկեր, նրանց վրա կան նաև ֆնասատուներ, համեմայն դեպս ներմուծվածից կարելի չի ընտրել բավական թվով լավ տուճկեր, և մենք պետք է այնպես անենք, վոր չխալտառակվենք, վորովհետև այդ գործի վրա վալյուտա չի ծախսված:

Յերկու խոսք հացաբույսերի մասին: Հացաբույսերի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, աչքի առաջ ունենալով վոր և՛ Անդրկովկասում, և՛ Խորհրդային Միության մի քանի շրջաններում յեղանակը չորային էր: Թեպետ վերջին որևիտ անձրևներ յեկան, տակայն, չորային յեղանակն անդրադարձավ հացի վիճակի վրա: Մենք պետք է խնայողաբար ծախսենք հացահատիկը: Այդ պետք է լավ յուրացնենք մենք, վորովհետև մենք սովորություն ունենք հաց խնդրելու: Քյալազոդություն ենք անում շրջանում և ապա խնդրում ենք: Դրան չպետք է վարժեցնենք մեզ և շրջանային կազմակերպություններին:

Անդրերկրումի բյուրոն արդեն միջոցներ է մշակել հացահատիկը տնտեսելու համար: Մենք պետք է լրիվ հավաքենք մեր բերքը, առանց կորուստների: Անցյալ տարի թեպետ Ուշնիկի-ձեյի անվան խորհրտնետությունը շնորհակալություն ստացավ ընկ. Յուրկինից պլանը կատարելու համար, բայց բերքահավաքի ժամանակ ունեցավ մոտ 100 հազար փութ հացահատիկի կորուստ: Պետք է հենց այժմյանից մտածել, վոր խորհրտնետություններ/, կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների գալտերում վոչ մի փութ հացահատիկ չկորչի:

Անասնաբուծության մասին: Կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Սալինի ասած խոսքերը և 17-րդ համագումարի վորոշումներն անասնաբուծության զարգացման մասին, ամբողջովին վերաբերում են նաև Անդրկովկասին: Մենք բոլոր պայմաններն ունենք անասնաբուծությունը զարգացնելու համար: Մենք ավելի շատ հնարավորություններ ունենք, քան գուցե բոլորն այլ յերկիր: Ծիշտ չէ, թե մեզ մոտ արոտավայրերը քիչ են: Յեթե մենք ընդհուպ զբաղվեյինք արոտավայրերի հարցով, մենք արտաավայր կգտնեյինք հենց Անդրկովկասի սահմաններում: Դադլատանն իր անասունների զգալի մասը պահում է Ադրբեյջանի արտաավայրերում և յես պնդում եմ, վոր այդ արոտավայրերում դեռ շատ անասուն կարելի չի տեղավորել: Ինչո՞ւ չենք կարող մենք այդ նպատակով ողտադործել Շիրակի և Եղարայի շրջանները: Կարելի չի և պետք է անել այդ: Հայաստանում ևս նույնպես հնարավորություններ կան: Պետք է ավելի լավ կազմակերպել այդ գործը: Պետք է շատ խոշոր մարդ տալ այդ գործը կազմակերպելու համար: Մենք պետք է մշտապես զբաղվենք այդ գործով և վոչ թե այն ժամանակ, յերբ սկսվում է քոչը: Մենք շատ ենք խոսում կերի պակասության մասին, բայց ի՞նչ ենք արել խոտացանությունը զարգացնելու համար, ի՞նչ ենք արել մենք այդ գործը կանոնավորելու համար: Քիչ բան ենք արել: Նույնիսկ այն ժամանակ, յերբ մեզ առվույտի համար պլան էր տրվել, մենք աշխատում էյինք կրճատել այդ պլանը, և անհրաժեշտ յեղավ ընկ. Սալինի միջամտությունը, վորպեսզի մենք հարկադրված լինեյինք այդ պլանն ընդունելու և կատարելու:

ԻԱՆՄԱՆՈՎ. — Յեվ դուրս յեկավ, վոր գերակատարեցինք:

ԲԵՐԻԱ. — Իսկ Ադրբեյջանի հողթողկմատն աշխատում էր ապացուցել, թե հնարավոր չէ կատարել: Այնուհետև, ընկերներ, պետք է հմտորեն դեկավարել անասնաբուծության գործը: Պետք

և շերտավորված մոտեցում ունենալ յուրաքանչյուր շրջանի նկատմամբ:

ԲՍՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ.—Ծիշտ ե:

ԲԵՐԻԱ.—Վոչ մի գեպքում չի կարելի խեղճ անասնաբուծական շրջանը համեմատել նույն խոլ թուշեթիայի հետ, վորովհետև նա շատ բանով և տարբերվում վերջինից: Միթե կարելի չե համեմատել խեղճ շրջանն Ախալքալակի շրջանի հետ, կամ Ախալքալակի շրջանը՝ Մինգրելիայի ու Գուրիայի հետ: Պետք է ամեն մի շրջանի համար առանձին ձևերակուսներ մշակել: Պետք է շերտավորված մոտեցում ունենալ վոչ միայն շրջանների, այլ և գյուղերի ու գյուղխորհուրդների նկատմամբ: Այդ կարելի չե անել միմիայն այն ժամանակ, յերբ ամեն մի շրջան լավ կուսուցանասիրի իր առանձնահատկությունները և ինչպես հարկն և կկազմակերպի անասնաբուծությունը զարգացումն իր շրջանում:

Ոոսել, թե քանի վոչխար, այժմ կամ այլ մանր անասուն կարող է ունենալ կոլտնտեսականը, — դատարկ, ավելորդ խոսակցություն է: Այժմ մեր խնդիրն է՝ բարձրացնել անասնաբուծությունը, իսկ այդ կարելի չե անել առավելագույն չափով բազմացնելով վոչխարները, այծերը և այլ անասունները, ինչպես կոլտնտեսություններում, այնպես էլ կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների մոտ: Դրա համար անհրաժեշտ է ոգտագործել բոլոր հնարավորությունները: Վերցնենք, որինակ, Թուշեթիան: Դա վոչխարաբուծական լավագույն շրջանն էր Անդրկովկասում: Այնտեղ մարդիկ գրագետ են. վորակյալ վոչխարաբույծներ են, սիրում են իրենց գործը, գիտեն այդ գործը: Նրանց մոտ այսպիսի տրադիցիա կա՝ զարգացնել այդ գործը կոլտնտեսական յեղանակով: Նախորդ տարիներին՝ 1930 թվականին և հաջորդ տարիներին, նրանք համարյա բոլոր անասունները ծախսեցին և կառուցեցին յերկհարկանի քարաշեն տներ: Այդ մարդկանց պետք է ոգտագործել Թուշեթիայում վոչխարաբուծությունը՝ լայն զարգացնելու համար: Պետք է հարց արժարծել, վոր հացահատիկ մատակարարվի այն շրջաններին, վորոնք սեփական հացահատիկ չեն ունեցել և ապրել են բացառապես դրսից բերվող հացահատիկով: Որինակ՝ Կազբեկի շրջանում շատ վոչխար կար, բայց այժմ սեփական հաց չունենալու պատճառով նրանք տարեց-տարի վաճառում են վոչխարները, վորպեսզի մեծ գումարներով հացահատիկ ձեռք բերեն: Պետք է մտածել այդ հարցի մասին: Անդրյերկոմի բյուրոն, ինչպես ասված է բանաձևում, պետք է քննի այդ

գործը, բայց կրկնում եմ, խոսքը վերաբերում է Անդրկովկասի միայն մի քանի բուն անասնաբուծական շրջաններին:

Ապա՝ խորհանոթագոթմատի խորհանոտությունների վիճակի մասին: Այդ խորհանոտությունները մեծ մասամբ կազմակերպել են վոչ այնտեղ, վորտեղ հարկավոր էր կազմակերպել:

ԲՍՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Ծիշտ ե:

ԲԵՐԻԱ.—Դրանցով ժամանակին վոչ վոք չի զբաղվել՝ ինչպես հարկն և, վոչ կուսակցական, վոչ էլ խորհրդային որդանները. ուստի տեղ-տեղ ֆևսարարներին հաջողվեց մոլորեցնել մարդկանց և խորհանոտություն կազմակերպել այնտեղ, վորտեղ վոչ կերի բազա կա, վոչ էլ նույնիսկ ջուր: Չի կարելի հույս դնել դրսից բերվող կերի վրա: Ուստի մենք պետք է լուրջ կերպով հարց դնենք հեռանկարներ ունեցող խորհանոտություններն ամրացնելու և հետագա զարգացման հեռանկարներ չունեցող մի շարք խորհանոտություններ վերացնելու մասին:

Պետք է միջոցներ ձեռք առնել, վոր ամեն մի խորհանոտություն ունենա ոժանդակ տնտեսություն: Վերցրեք, որինակ, «Սամուրեստը»: Դուք կարծում եք, վոր «Սամուրեստը» առայժմ ֆևս չի կրել անասնաբուծական խորհանոտություններից: Վնասներ կան, սակայն դրանք ծածկվում են խողաբուծությամբ, գինու և այլ մթերքների շահույթներով: Պետք է լավ մտածել ամեն մի խորհանոտություն մասին, մտածել, թե ինչ կարելի չե կազմակերպել նրա համար լրացուցիչ կերպով: Այստեղ ևս չի կարելի միտնոտակ չափանիշով մոտենալ բոլոր խորհանոտություններին:

Մի քանի ընկերներ կարծում են, թե հարկային մասմթեքությունները նվազեցնում է անասունների թիվը: Դա ֆևսակար ուսխալ «տեսություն» է: Մեր վատ աշխատանքն է, մեր անուշադրությունն է դեպի գործը, վոր նվազեցնում է անասունների թիվը, և վոչ թե հարկը: Ընկ. ընկ. Ստալինի և Մոլոտովի հեռագրում ուղղակի ասված է՝ «ՍՍՀՄ ժողկոմխորհը և Համ Կ (բ) Կ Կենտկոմը մատնանշում են, վոր... միա հանձնելու համար սահմանված պլանների կատարումը մի պարտադիր պայման է հենց անասնաբուծության զարգացման համար»:

Այստեղ մեկնաբանություններն ավելորդ են:

Կովազուրկ կոլտնտեսականների տնտեսությունների մասին: Մեզ համար խայտառակություն է, վոր մենք մինչև այժմ չենք կարողացել վերացնել կոլտնտեսականների կովազրկությունը: Մեզ մոտ, Արևմտյան Վրաստանում, այսպիսի կարծիք է տարած-

ված, ինչու գլուխ ցավացնեմ հորթի հետ, ավելի լավ է հասած կով կգնեմ: Սակայն ումից պիտի գնեն նրանք հասած անասունը: Ո՞վ է անեցնելու մատղաշ անասունները: Ձե՞ վոր հիմնական խնդիրն է մատղաշ անասուններ մեծացնելը, իսկ դրա համար հարկավոր է մատղաշ անասուններ տալ կովագուրդներին, ստիպել նրանց աշխատանք կատարելու անասունները մեծացնելու համար: Մենք պետք է պայմաններ ստեղծենք, վոր 1934 թվականին այդ խնդիրն իրագործվի թեկուզ 50 տոկոսով, իսկ 1935 թվականին մենք պետք է լիովին վերացնենք կոլտնտեսականների կովագուրդությունը: Մենք պետք է մտածենք նաև կոլտնտեսություններում անհատապես ոգտագործվող անասունների տեղական ցեղերը դարգացնելու մասին, որինակ՝ մինգրելյան աշները, վորոնք տալիս են բավականին սննդաբար և մեծ քանակությամբ կաթ: Արևմտյան վերաստանում անտես է առնված գոմեշների բազմացումը, վորոնք փոքր խնամք են պահանջում, նույնը նաև ուղտերի մասին: Ադրբեջանում: Յես գտնում եմ, վոր ուղտն ու գոմեշը պետք է իրենց պատվավոր տեղը զբաղեն մեզ մոտ:

Մենք Անդրյերկումի պլենումում անասնաբուծության հարցի համար, վորպես զեկուցողներ՝ գիտակցաբար առաջադրեցինք հանրապետությունների ժողկոմխորհների յերեք նախագահներին, վորպեսզի հարկադրենք ժողկոմխորհների մեր հարգելի նախագահներին ընդհուպ մոտենալ այդ գործին, և յես, ընկերներ, արդեն լսեցի, վոր դա ոգուտ է բերել նրանց:

ՌԱՆՄԱՆՈՎ.— Ճիշտ է:

ԲԵՐԻԱ.— Բայց մենք վոչ միայն պետք է պատրաստվենք զեկուցումներ տալու, այլև մեր ընթացիկ աշխատանքում պետք զբաղվենք այդ հարցերով, այնպես ինչպես զբաղվում ենք շինարարության, բամբակի, ցիտրուսների հարցերով, յերբ համարյա 20-ական անգամ հարկադրված ենք լուծել դրանց վերաբերող այս կամ այն հարցերը:

ԲԱՂԻՐՈՎ.— Միանդամայն ճիշտ է:

ԲԵՐԻԱ.— Յեթե մենք նույն կերպ վերաբերվենք անասնաբուծության հարցերին, անտարակույս մենք առաջ կմղենք անասնաբուծությունը: Մենք կկարողանանք ել ավելի լավ ամրացնել գյուղի դրությունը և իրագործել մեր առաջ դրված խնդիրներն այն դեպքում, յերբ գյուղում ուժեղացնենք կուսակցական մասայական աշխատանքը: Մեզ մոտ հաճախ կուսակցական մաս-

այական աշխատանքի փոխարեն ինչ վոր վազվզոց, իրարանցում և ստացվում: Առանց վազվզոցի նույնպես չի կարելի, բայց պետք է վազվզել մտածված կերպով: ՄՏ հայանների քաղաքներին պետերն ու գիրկատորները, շրջկոմների քարտուղարը կամ հանրապետական կենտրոնից շրջան ու գյուղ ուղարկված ընկերը, այցելելով կոլտնտեսությունն ու գյուղը, իրենց հետևից պետք է թողնեն դրական աշխատանքի հետք: Ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր կոլտնտեսություն կամ շրջան գալով՝ վոչ միայն պետք է խոսել կոլտնտեսության նախագահի կամ շրջկոմի քարտուղարի հետ, վոչ միայն աչքի անցկացնել թվերը, այլև բանիմաց կերպով, լրջորեն խոսել կոլտնտեսականների ու բրիգադիրների հետ, ստուգել, թե ինչ են արել նրանք, ինչ առաջադրանքներ ունեն, պետք է ցուցումներ և գործնական ոգնություն տալ նրանց: Այդ ոգտակար է այն պատճառով, վոր ինքը ել կիմանաս, թե ինչ է կատարվում կոլտնտեսության մեջ, գյուղում և կոզնես նրանց: Այն ժամանակ հաջորդ անգամ գալիս, դու արդեն կկարողանաս ստուգել, թե արվել է արդյոք այն, վորի մասին խոսվել է առաջ: Իսկ դրա փոխարեն, փոխանակ բացատրություններ ու ցուցումներ տալու, մեզ մոտ շատ հաճախ սոսկ աղաղակում են և խուճապ են ստեղծում կամ տվյալներ են հավաքում:

Ղեկավարության այսպիսի մեթոդը միայն ընդհարումներ և ստեղծում աշխատանքում:

Ապրանքաբանաբանության հարցի մասին այստեղ խոսվեց բավականաչափ մանրամասնորեն ու պարզորոշ: Ի՞նչ պետք է անենք մենք: Պետք է միայն ապրանքի նոր, լրացուցիչ մասաներ մտցնենք ապրանքաշրջանառության մեջ, արագորեն հասցնենք դրանք սպառողին, հասնելով բարձր վորակի և համապատասխան ասորտիմենտի: Այդ կատարելու համար, պետք է հարկադրել և՛ կոոպերացիային և՛ պետառևտրին՝ ավելի լավ աշխատելու: Վերցրեք որինակ «Զակսոյուզը»՝ կամ պետք է ոպերատիվ ֆունկցիաներ տալ նրան, կամ բոլորովին չպետք է ունենալ այդ կազմակերպությունը: Պետք է «Զակսոյուզին» հնարավորություն տալ Անդրկովկասի համար ապրանքի մեծաքանակ գնումներ կազմակերպելու Մոսկվայում, Լենինգրադում և Միլոթյան մյուս խոշոր քաղաքներում, միաժամանակ չսահմանափակելով այդ կողմից հանրապետական սպառկոոպությունները, այլ զարգացնելով վերջիններիս նախաձեռնությունը:

Յերկու խոսք այն հարցի մասին, թե ինչպես են հասկանում մեր շրջանային կազմակերպություններն սպառողական միություններին ցույց տրվելիք ոգնությունը: Համարյա բոլոր շրջաններում դրությունը միատեսակ է, մոշ մեկը բացառություն չի կազմում: Վերցնենք ճաշարանը: Շրջկոմը կամ շրջգործկոմը հաճախ պահանջում են ինքնարժեքից ել ցածր դարձնել ճաշի գինը: Պետք է նախ վերլուծել, թե ինչպե՞ս ճաշը թանկ է, գտնել այն պատճառները, վորոնք թանկացնում են ճաշերը, ոգնել վերացնելու այդ պատճառները և ապա իջեցնել գները: Իսկ տեղերում գներն իջեցնում են սոսկ մեքենայորեն: Դրա հետևանքով փաստ է ստացվում, որ ինակ, միայն գյուղական ճաշարանների գծով «Ցեկավշիրին» ունի 3 միլիոն ուրլու փաստ, «Աղետտիֆակ»-ը 1 միլիոնից ավելի, հայկոսյը՝ 1 միլիոն փաստ իրրի թե շրջանային ղեկավարությունը ցանկանում է ավելի հոգ տանել իր ակտիվ մասին: Դա որինական ցանկություն է, բայց դեռ քիչ է գալ և հրամայել, վոր գներն իջեցվեն: Գործը պետք է ավելի լավ կազմակերպես, յեթե ուզում ես հոգ տանել քո ակտիվի մասին և քո ամբողջ ակտիվը նույնպես մտահոգվի սպառողական կոոպերացիայի վիճակով:

Ֆինանսական դրություն և յուրացումների մասին: Այստեղ թվեր բերվեցին 1933 թվականին կատարված 10 միլիոն ուրլու հասնող յուրացումների մասին: Այդ, ի հարկե, յերևան բերված յուրացումների գումարն է, իսկ դեռ վորքան չի հայտարարված առայժմ: Այսանդակ է կոոպերացիայի ֆինանսական դրությունը: Պետք է ուղղակի ասել, վոր մենք վատ ենք հաշվում ուրլիները: Մենք արհամարում ենք այդ հաշիվը: Պետք է սովորել դրամը հաշիվել: Մեզ մոտ, Անդրկովկասում, մեծ արհամարանք ենք տեսնում դեպի այդ գործը, ինչ վոր ազատ վերաբերմունք դրամի նկատմամբ:

ՏԵՂԻՑ.— Ազնվականների վերաբերմունք:

ԲԵՐԻԱ.— Նույնիսկ ազնվականներն սկսեցին ավելի լավ հաշիվել դրամը, յերբ վերջինս քչացավ նրաց մոտ: Այդ վկայում է, վոր կադրերը մինչև այժմ ել թույլ են: Պետք է ասել, վար է՝ դատարանը, և՛ դատախազությունը նույնպես այնպես չեն աշխատում, ինչպես վոր հարկավոր է: Գործը տաս ամիս քննվելու փաստերն ապացուցելու յեն այդ: Ի՞նչ արդյունք կարող է տալ տաս ամիս հետո կատարված դատը: Պետք է իսկույն քննել գոյություն, վատնումի և այլ նման գործերը: Այդ կրարձրաց-

նի աշխատողների պատասխանատվությունը և յերեի շատերին կհարկադրի ստուգելու, թե ինչ վիճակի մեջ է նրանց մոտ դրամի գործը: Մեզ մոտ չափազանց բարձր են շրջանառության ծախսերը, մանավանդ տրանսպորտում: Բոլորն ել ուզում են ավտոմեքենաներ ստանալ: Բայց ինչպե՞ս չի կարելի ստեղծել սեփական գուժորանսպորտ և ապահովել վերջինս սեփական ձիերով, սեփական դարբնոցով և այլն: Ինչպե՞ս չի կարելի ունենալ սեփական ֆուրգոններ, սայլեր և այլն: Կարելի յե և պետք է դրադիվ այդ գործով:

Վերցրեք այնպիսի յերևույթ, յերբ առևտրական շենքերը, խանութներն զբաղեցնում են կազմակերպություններ, վորոնք վոչ մի առնչություն չունեն առևտրի հետ: Ինչից է առաջ գալիս այդ: Այդ առաջ է գալիս նրանից, վոր մենք բավականաչափ չենք զբաղվում այդ գործով: Կուս կազմակերպությունները դեռ յենաանդալին ձեռնամուխ չեն յեղել այդ գործին և մշտական վերահսկողություն չեն հաստատել խանութների ճիշտ ոգտագործման վրա:

Ընկերներ, ապրանքաշրջանառության հարցերը պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում: Մենք պետք է անհապաղ մեր լավագույն ուժերը նետենք աշխատանքի այդ ճակատամասը և ստեղծենք վերջապես, այնպիսի դրություն, վոր ապրանքաշրջանառության վերաբերյալ ընկեր Ստալինի խոսքերն իրական գործ դառնա մեզ մոտ՝ Անդրկովկասում:

Ընկերներ, մեզ մոտ, պլենումում, նավթի հարցը չի դրված: Վոչ իհարկե այն պատճառով, վոր մենք նավթով ավելի քիչ ենք զբաղվում և այդ հարցը մոռացություն է տրված մեզ մոտ: Կուսակցության Անդրյերկոմը, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի և Բագվի Կոմիտեյի հետ միասին, որ-նավոր զբաղվում են նավթի հարցերով:

Ինչպես գիտեք, այս տարի մենք պետք է տանք 21 միլիոն տոնն նավթ և մի միլիոն տոնն գաղ:

Ի՞նչ վիճակի մեջ է այժմ նավթարդյունաբերությունը: 1933 թ. առաջին չորս ամիս և 25 որում ստացվել էր 5.142.735 տոնն նավթ: Իսկ 1934 թ. նույն ժամանակամիջոցում մենք արդեն ստացել ենք 7.334.000 տոնն նավթ, վորը կազմում է 142,6 տոկոս՝ համեմատած անցյալ տարվա նավթի հանույթի քանակի հետ:

Ինչպես տեսնում եք, դա շատ մեծ նվաճում է: Սակայն այստեղ պետք է աչքի առաջ ունենալ, վոր այս տարվա պլանը

մեծ և՛ վոշ թե 14.400.000 տոնն, ինչպես անցյալ տարի, այլ 21 միլիոն տոնն նավթ և մի միլիոն տոնն գազ: Իսկ այժմ մենք դեռ լուրջ ձեղքվածք ունենք:

Կուսակցության Անդրյերկումը, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հետ միասին, ձեռնարկում են մշակել Ադրբեջանի նավթարդյունաբերության աշխատանքը վերակառուցելու և բարելավելու համար, համաձայն Ազնեվթի առաջ գրված խնդիրների:

Նավթի հարցը քննվեց նաև Համ Կ (բ) Կ Կենտկոմում:

Դուք անշուշտ կարդացել եք Համ Կ (բ) Կ Կենտկոմի վորոշումը: Այդ վորոշումը ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ ուշադրություն և նվիրում Համ Կ (բ) Կ Կենտկոմը նավթին:

Համ Կ (բ) Կ Կենտկոմն այդ վորոշման մեջ իր վստահությունն է հայտնում, վոր Անդրկովկասի և Բազլի կադմակերպությունները դուրս կբերեն նավթարդյունաբերությունը ձեղքվածքից և կկատարեն պլանը: Դուք յերեկ կարդացել եք Անդրյերկոմի ապրիլի 10-ի վորոշումը՝ Ադրբեջանի նավթարդյունաբերությունը վերակառուցելու մասին: Համ Կ (բ) Կ Կենտկոմը հավանություն տվեց Անդրյերկոմի այդ վորոշմանը և պարտավորեցրեց Գլխնեֆտին ու Ազնեֆտին ամբողջ վերակառուցումն ապարտել մինչև հունիսի մեկը: Համ Կ (բ) Կ Կենտկոմի վորոշումը շատ պարտավորություններ է դնում մեզ վրա և տասնապատկում է մեր պարտախանութությունը պլանը կատարելու համար:

Կենտկոմն իր վորոշմամբ պարտավորեցրեց մեր հայրենի արդյունաբերությունը՝ դարձնել իր յերեք-դեպի նավթարդյունաբերությունը: Այդանդ ասված և՛ «Կենտկոմը մասնանշում է, վոր փորելու արագությունն անթույլատրելի չափով հետ է մնում ամերիկյան արդի արագությունից: Դա հետևանք է փորելու տեխնիկային բավարար չափով չտիրապետելուն, հետևանք է գլխավորապես այն հանգամանքի, վոր խորհրդային գործարաններում չկա ժամանակակից բարձրորակ սարքավորման արտագրություն»:

Դրա հետ միասին, Կենտկոմը պարտավորեցրեց Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմին ու Բազլի Կոմիտեին՝ կուսակցական մաստայական աշխատանք ծավալել բանվորների ու ինժեներ-տեխնիկական աշխատողների մեջ նավթի հանույթի պլանն անսպալման կատարելու համար, ուրվագրված վերակառուցումն արագորեն ապարտելու համար, միաժամանակ

նաև ամենայն վճռականությամբ պայքար մղելով պահպանողական տրամադրությունների և վերակառուցման նկատմամբ ցուցարներից դիմադրություն դնել:

Արդյոք այդ բոլորն անում ենք մենք՝ մեզ ցույց տրվող վերաբերմունքն արդարացիապես համար: Դրա մասին շատ կարելի չի խոսել, բայց յես կանգ կառնեմ միայն այն հարցերի վրա, թե ինչ ենք անում մենք կուսակցական մաստայական աշխատանքի գծով: Անդրյերկոմը Կադանովիչի անվան նավթահանքերը մի բրիգադ ուղարկեց՝ Անդրյերկոմի ղեկավար կուսորդանների բաժնի վարիչ ընկեր Մուստաֆաևի գլխավորությամբ: Ստուգումը հայտնաբերեց, վոր նավթահանքում անբավարար է կուսակցական մաստայական աշխատանքի վիճակը: Ահա որինակ՝ «Կադանովիչի անվան նավթահանքի կուսկազմակերպությունը 17-րդ համագումարի արդյունքներն ուսումնասիրել և ձեվական զեկուցումներով, ընդգրկելով միլիարդ մեկ վախճալի կոմունիստներին: Համագումարի շրջանում գոյություն ունեցող կուսկուսավորության ցանցում ընդգրկված ելին ռալոնի կուսկազմակերպությունից միայն 40 հոգի: Կուսկազմակերպության մոտ 360 անդամն իրազեկ չեն 17-րդ համագումարի վորոշումներին: Անդրյերկոմի բրիգադի կողմից 100 կոմունիստի հետ ունեցած անհատական զրույցը ցույց տվեց, վոր այդ թվից կուսակցությունն ուր կանոնադրությունը կարդացել են միայն յերեք հոգի, մյուսները չեն կարդացել, ներառյալ նաև փորող յերկրորդ խմբի կուսկոմի քարտուղարը, № 200 նավթահորի կուսկազմակերպիչը և այլն, և այլն»:

Կամ մի այլ որինակ՝ «գործիքների ցեխում, վորտեղ կա 12 կոմունիստ, գոյություն ունի վոշ վորի կողմից հաստատված և չընտրված ինքնակոչ կուսկոմ՝ բաղկացած 5 հոգուց, կառուցման բաժնի քարտուղարի գլխավորությամբ»: Մոտ 100 հոգի, վորոնց հետ զրույց ունեցավ բրիգադը՝ չգիտեն Համ Կ (բ) Կ Կենտկոմի Ազնեֆտի վերաբերյալ կայացրած վերջին վորոշումը: Իսկ մյուսները չեն հիշում, թե վորն է ելականն այդ վորոշման մեջ: Վերջին 3—4 ամսում նավթահանքի կուսկազմակերպության մեջ վոշ մի լուրջ նախապատրաստված կուսակցական որ չի կազմակերպվել:

Այստեղ ներկա յե ընկեր Սեֆը, կուսակցության Բազլի կոմիտեի քարտուղարը: Յես անձամբ շատ եմ հարգում նրան, բայց,



ընկերներ, յեթե մենք միմյանց չքննադատենք, յեթե մենք յեկ-
նենք այն բանից, վոր միմյանց հետ լավ հարաբերություններ
ունենք, ապա կթթվենք, մեզ մոտ ճահճ կստացվի:

ԲԱՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Ճիշտ է:

ԲԵՐԻՍ.—Ի՞նչ է անում Բագվի կոմիտեն, յերբ Ազնեֆադ
պլանը չի կատարում, յերբ կուսակցութեան Անդրյերկոմի վորոշ-
մամբ, տեղի յե ունենում Ազնեֆադի հիմնական վերակառուցումը,
յերբ Համ Կ(բ) Կենտկոմը հատկապես քննում է նալթի հարցը և
ընդունում է ամենալուրջ, յես կասելի՝ պատմական վորոշումներեց
մեկը նալթարդյունաբերութեան մասին:

Համ Կ(բ) Կենտկոմը հալանություն է տալիս և հաստատում
է կուսակցութեան Անդրյերկոմի Ազնեֆադի վերակառուցման վե-
րաբերյալ կայացրած վորոշումը. այդ պարտաւորեցնում է մեզ,
վոր կուսակցական որերն առանձնապես բովանդակալից, պատ-
րաստված, կենսալից լինեն, այլապես մենք յերբեք չենք բարձ-
րացնի վոչ նսլթը, վոչ էլ տնտեսութեան վորեւ ճյուղ: Բայց ի՞նչ
է կատարվում այդ ժամանակ: Բագվի Կոմիտեյի քարտուղարը
մայիսի 15-ին մի շրջաբերական է գրում բոլոր ռայկոմների քար-
տուղարներին, թե 17-ին կուսոր է նշանակվում: Իսկ ռայկոմի
քարտուղարն այդ դիրեկտիվ-նալան ստանում է միայն մայիսի
17-ին: Ահա փաստաթուղթը:

«Բոլոր շրջկոմների քարտուղարներին,

Ազրբեջանի կոմկուսի Բագվի Կոմիտեն առաջարկում է Բագ-
վի ամբողջ կազմակերպութեան հերթական կուսակցական որը
կազմակերպել մայիսի 17-ին, հրավիրել սկզբնական կուսկաղմա-
կերպությունների ընդհանուր ժողովներ, վորտեղ քննարկել
պայքարի բոլոր ներքին միջոցները նալթի հանույթի պլանի
կատարման համար մոբիլիզացիայի յենթարկելու հարցը և Բագ-
վի Կոմիտեյի վորոշումը՝ խմբերը տնտհաշվարկի փոխադրելու
մասին:

Կուսորվա արդյունքների վերաբերյալ ինֆորմացիան ներ-
կայացնել Ազրբեջանի Կոմկուսի Բագվի Կոմիտեյին՝ վոչ ուշ քան
մայիսի 10-ը:

Ստորագրում է Բագվի Կոմիտեյի քարտուղար ընկ. Սեֆը:

Այդ փաստաթուղթն ստացված է 17-ին: Որակարգում գըր-
ված է այսպիսի հարց՝ ներքին ռեսուրսների մոբիլիզացիան
և Ազնեֆադի վերակառուցումը, առաջարկվում է արդյունքները
հաղորդել 19-ին: Յերեկայում եմ, թե ինչ արդյունքներ կարող

է հաղորդել այդ ռայոնը Բագվի Կոմիտեյին: Ստացել է 17-ին և
նույն որը պետք է նախապատրաստի, անցկացնի կուսորը, իսկ
հաջորդ որն ամիսի արդյունքները:

Յերբ Անդրկոմկուսի ամբողջ կուսկազմակերպությունը պայ-
քար է մղում նալթի համար, յերբ այդքան լուրջ է գրված նալթի
հարցը՝ չի կարելի այդպես պատրաստվել կուսորվանը: Դա պար-
զապես սխալ է: Թող ընկեր Սեֆը չհեղանա: Մենք միմյանց
կքննադատենք և կողերը կջարդենք, յեթե վատ աշխատեք,
այլապես մենք այստեղ չպետք է նստենք (ծափեր): Ինչու այսոր
յես հատկապես այդ որինակը բերի Բագվի կազմակերպություն-
նից: Մեզ մոտ քիչ հիմարություններ չկան և՛ Յերեկայում, և՛
Թիֆլիսում, և՛ մյուս շրջանային ու քաղաքային կենտրոննե-
րում, սակայն Բագվի կազմակերպությունն այսոր էլ, վաղն էլ,
շատ տարիներ էլ, առաջատար կազմակերպություն է լինելու
(ծափեր):

ԲԱՂԻՐՈՎ.— Յեվ պետք է կարողանալ այստեղ աշխատել:

ԲԵՐԻՍ.— Ուստի չի կարելի Համ Կ(բ) Կենտկոմի և մեր
կուսակցութեան առաջնորդի վստահությանը, զգայուն վերաբեր-
մունքին պատասխանել այդպիսի փաստաթղթերով, վատ կազ-
կերպված աշխատանքի որինակներով:

Ի վերջո՝ յերկու խոսք մեր աշխատանքի վոճի մասին:
Մենք պետք է բուլեվիկյան վոճ պատվաստենք մեր տնտեսական
ու խորհրդային կազմակերպությունների աշխատանքում: Այս
կամ այն ժողովատուր, արեսուր կամ միավորումը գլխավորող ըն-
կերները պետք է իրենք լավ աշխատեն և իրենք պայքար մղեն
իրենց աշխատանքի, իրենց, խնդիրների համար: Իսկ դա միշտ
չի լինում:

Մենք ղեկավարներից պիտի պահանջենք, ստիպենք պա-
տասխան տալ իրենց հանձնված գործի համար: Նրանք պետք է
պատասխան տան նաև իրենց մոտ աշխատող կադրերի համար:
Չի կարելի աշխատել այնպես, վոր իբր թե կադրերը նրանց չեն
վերաբերում, իբր թե կադրերը կընտրեն Կենտկոմը կամ Անդր-
յերկոմը: Իսկ ինչի՞ համար է նստած ղեկավարը: Թող Անդրյերկոմի
և Կենտկոմի հետ միասին ընտրի կադրեր: Նա ամբողջովին պա-
տասխանատու յե և՛ իր ապարատի աշխատանքի համար, և՛
անձնակազմի համար, և՛ իր աշխատակիցների գործողությունների
համար: Դուք հարկավ կարդացել եք թերթերում, կենտրոնական
որդան «Պրավդայում», կարդացել եք Անդրյերկոմի վորոշման

մեջ այն այլանդակ արարքների մասին, վոր ցուցաբերել են Մոսկվայում ու Լենինգրադում Վրաստանի, Անդրկովկասի տրեստեական կադմակերպութիւնների այսպէս կոչված ներկայացուցիչները: Ինչո՞ւ տեղի ունեցան այդ այլանդակութիւնները: Վորովհետեւ յերբեմն ուղարկվում էին չստուգված մարդիկ, չեւ ստուգվում, թե ո՞ւր և ինչի՞ յին գնում նրանք, տրվում էին մանդատներ մեծ իրավունքներով: Յեւ նրանք առանց կոնտրոլի շրջում էին Միութեան մեջ, գնում, վաճառում, սպեկուլյացիայով էին զբաղվում, այլանդակութիւններ էին անում: Պարզվեց, վոր այդ «ներկայացուցիչներին» նույնիսկ մտքուր բանկներ են տվել հիմնարկների ղեկավարների ստորագրութեամբ: Պատասխան պիտի պահանջենք նաեւ գործուղումների համար՝ ում վոր գործուղում եւ, նրա համար պետք է պատասխանատու լինեա: Չեւ ճանաչում նրան՝ մի ուղարկիր, հարցրու: Յերբեմն ղեկավարներն իրենք տարվա ընթացքում 250 որ գործուղման մեջ են և այդ կոչվում և գործը ղեկավարել: Պետք է Անդրկովկասյան կադմակերպութեան վրա ծանրացած այս խայտառակութիւնը ջնջել լայ աշխատանքով:

Իսկ շատերը դարմանում են, թե ինչո՞ւ յին այդպէս հուպ տալիս, ինչո՞ւ անհրաժեշտ է այդքան խտիւղ ստուգել գործուղվողներին: Մենք այդ անում ենք նրա համար, վոր վերջ տանք այլանդակ գործուղումներին:

ԲԱՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ծիշտ է:

ԲԵՐԻԱ.— Ապա պետք է աշխատել, վոր ընդունված վորոշումների և դրանց իրագործման ժամանակի միջև խզում չլինի, ծայրահեղ դեպքում նվազագույն չափի հասցվի խզումը: Հաճախ պատահում է, վոր վորոշումն ընդունվում է և ապա մոռացվում է: Կամ ասում են՝ անա Ագնեֆտի վերաբերյալ վորոշումը, մեծ վորոշում, քաղաքական կարեւոր իմաստ ունեցող վորոշում է և այլն, բայց ձգձգում են նրա կենսագործումը: Վորոշումը կայացվել է, բարի յեղիք, կադմակերպիք այդ վորոշման իրականացումը և վոչ մի պատճառաբանութիւն մի անիր, մի ձգձգիր:

Մի քանի գիտողութիւններ եւ: Ընկերներից վոմանք քննադատութիւն չեն սիրում: Նրանց քննադատում են, ոգնում են նրանց, նրանց փոխարեն անում են գործը, անում են մի անգամ, անում են յերկու անգամ, յերեք անգամ: Ուղղում են, իսկ նրանք բարկանում են:

ԲԱՂԻՐՈՎ.— Դեւ ու դեն են ընկնում և բոլորին դանգաժում են, թե նրանց վերաբերել են:

ԲԵՐԻԱ.— Իսկ այդ «բոլորը» նույնպէս լսում են նրանց և համակրող մարդիկ են ձեռնում:

Սկսում են շաղակրատել մեկի առաջ, պատմում են ուրիշին, պատմում են, ապա իրենք ել սկսում են հալատալ իրենց ասածին:

ԲԱՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ծիշտ է (ծիծաղ, ծափեր):

ԲԵՐԻԱ.— Կա մարդկանց այնպիսի կատեգորիա, վորը կամ չի ուզում աշխատել, կամ ուզում է, բայց չի կարող: Դրանք աշխատանքից հեւ մնացող մարդիկ են: Իսկ այսոր մեզ մոտ դրութիւնն այսպէս է՝ յեթե դու այսոր կամ վաղը բաց թողիք աշխատանքը, այդ կղգաս յերրորդ որը և պետք է լրացնես բաց մնացածը:

Յեթե ընկերներն իրենց վրա չաշխատեն, չուսումնասիրեն գործը, չթափանցեն նրա մեջ, սրտացալ չլինեն աշխատանքում, նրանք հեւ կմնան և կամա-ակամա կընկնեն այն շաղակրատներին շարքը, վորոնց մասին խոսեց այստեղ: Պետք է հարվածել շաղակրատներին՝ կամ աշխատիք կամ հեռացիր և մի խանգարիր:

ԲԱՅԱԿԱՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ծիշտ է (ծափեր):

ԲԵՐԻԱ.— Ընկերներ, համագումարից հետո անցած ժամանակամիջոցում շարունակ ամրացել և մեր գյուղի քաղաքական դրութիւնը: Այդ պետք է ուղղակի ասել: Մեր կոլտնտեսութիւններն ամբապնդվում են: Անցյալ տարի հեւ մնացած տասնյակ կոլտնտեսութիւններ այժմ անցել են առաջավորների շարքը: Գյուղացի կոլտնտեսականը, աշխատավոր մենատնտեսը մեծ յեռանդով աշխատում են դաշտերում և վատ չեն աշխատում:

Այդ բոլորը ցույց են տալիս, վոր մեզ մոտ, գյուղում, դրութիւնը վատ չի:

Դրութիւնն զգալի չափով բարելավվել է նաեւ սահմանամերձ շրջաններում: Հայաստանի մի քանի լեռնային շրջաններում տեղի ունեցած խեղաթյուրումներն ու խոտորումները նույնպէս ուղղվում են: Դրա ցուցանիշն է այն, վոր այդ շրջանները ցանքըն աւարտել են, իսկ դա լայ նշան է:

Կուսակցութեան Անդրյիւրկումը վորոշում ընդունեց այդ շրջանների մասին: Այդ վորոշման կետերից մեկի հիման վրա, մենք Ադրբեջանից վերցրինք մի քանի աշխատողներ և Հայաստան փոխադրեցինք, վերցրինք նաեւ Վրաստանի և Անդրկովկասի

կազմակերպութիւններին աշխատողներին: Մենք, ի հարկե,
վերցրինք լավ աշխատողներին, բայց նրանցից մի քանիսը զըծ-
կամությամբ են գնում: Այդ բանը, ընկերներ, հասկանալի չե-
ինձ համար: Յեթե մենք հավատում ենք կուսակցութեան մեր
Յերկրկումին, յեթե մենք գտնում ենք, վոր նա հանդիսանում է
Անդրկովկասի կուսկազմակերպութեան իսկական շտաբը, ապա
թույլ տվեք այդ շտաբին լուծել ուժերի բաշխման հարցերը:
Կուսակցութեան առաջադրանքով գնալ հետ մնացող շրջանն աշ-
խատելու պատշաճ վոր գործ է, ընկերներ (ծափեր):

Յես համոզված եմ, վոր Հայաստանի կոմկուսը, Հայաստա-
նի բոլշևիկներն արագորեն կուղղեն իրենց թերութիւնները և
այդ շրջաններում հաստատուն կերպով վոտքի կկանգնեն:

Ընկերներ, մեզ մոտ հենց նոր վրա յե հասնում ամենապատաս-
խանատու շրջանը՝ տարվա յերկրորդ կեսը: Յերկրորդ կիսամյա-
կը մեզանից պահանջում է վերացնել բոլոր բացերը, այդ վերա-
բերում է և՛ գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը,
և՛ գյուղատնտեսական ապրանքների մթերման պլանի կատար-
մանը և վոր գլխավորն է՝ նալթին:

Յես, ընկերներ, համոզված եմ, վոր Համ Կ (բ) Կ կենտկոմը և
ընկեր Ստալինն այժմ ևս չեն սխալվի, ինչպես չեն սխալվել ա-
ռաջ, վստահելով անդրկովկասյան կազմակերպութեան: Անդրկով-
կասի բոլշևիկները պետք է արդարացնեն այդ վստահութիւնը և
պատվով կատարեն նալթի ու աշխատանքի մյուս բնագավառ-
ների առաջադրանքները (բուռն ծափեր: Բոլորը վոտքի յեն
կանգնում):

Թույլ տվեք սրանով փակված համարել պիտուածը:



Թարմ. խմբագիր՝ Գ. Իսահակյան
Սրբազրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել և արտադրության 1934 թ. հունիսի 17-ին,
Ստորագրված և տպագրելու 1934 թ. հունիսի 17-ին:
Գլավիտի լիազոր.—Ն. 269. Հրատ. № 114. Տիրաժ 3000
Պատվեր № 427. մեկ տպագր. թերթում 76800 տպ. նշ.

ԳԻՆԸ 35 ԿՈՄ

Լ. ԵՐԻԱ

По большинству реализуем решения
второго пленума ВКК ВКП (б)

ՏԵԼԽՈՅԻՆ

1934

ՋՐԻՎԱՆ

<< Ազգային գրադարան



NL0183551

